

Ալի Սմիթ

ԱՄԲՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

և

այլ պատումներ

Թարգմանիչ՝

Ալեքսանդր Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2019

Սմիթ, Ալի

ԱՄՔՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ և այլ պատումներ, Եր. Գիտանք, 2019,
126 էջ

Այս ժողովածուն տասներկու արտասովոր պատմվածքների շարք է: Հերոսներից մեկը հանդիպում է Մահին, որն իր մահը չէ, մյուսը սիրահարվում է ծաղկած ծառին, երրորդը նավակ է կառուցում «Մեծն Գեթսբի» վեպի օրինակներից... Խուլ տիկին, որին հետապնդում է պարկապզուկահարների նվազախումբը... գրախանութն այլ նպատակով այցելող մարդիկ...

Շոտլանդուհի Ալի Սմիթը ժամանակակից անգլիալեզու լավագույն գրողներից է: Նրան բնութագրել են որպես «Նոբելյան մրցանակի Շոտլանդիայի թեկնածու»: Տասից ավելի վեպերի և պատմվածքների հինգ ժողովածուների հեղինակ է: Նրա գործերն արժանացել են բազմաթիվ մրցանակների և մի քանի անգամ ընդգրկվել են հեղինակավոր Man Booker Prize մրցանակի և այլ մրցանակների վերջնացանկում:

ISBN 978-9939-810-44-7

THE WHOLE STORY AND OTHER STORIES

Copyright © 2003, Ali Smith

All rights reserved

© Գիտանք, թարգմանության և ձևավորման համար, 2019

ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐ

Սա իրոք պատահել է:

Ոչ շատ վաղուց, մի կեսօրին, 1990-ականների գարնանը: Մի տղամարդ եկավ գրախանութ, որտեղ ես աշխատում էի: Նման էր դրամատան աշխատողի, հաշվապահի կամ գործարարի: Պատշաճ սանրվածք ուներ, պաշտոնագրեստով էր ու փողկապով: Ես ձգվեցի: Արդեն խնդիրներ ունեի աշխատավայրում, ուստի չէի ուզում բարդացնել վիճակս: Նա կարևոր անձնավորության տեսք ուներ:

Գրախանութը, որտեղ աշխատում էի, խիստ ավանդապաշտ էր. իմ խնդիրը այն էր, որ հագուստս պատշաճ տեսակի չէր: Մի քանի օր առաջ ես աշխատանքի էի եկել գործված զգեստով, որին զեղակառուցողի կարգախոս կար: Մեջքիս լայնքով գրված էր՝ *Երագում տեսել ես վերապրելու ծանապարհը և չի ես բերկրանքով*: Իմ զգեստը վրդովեցրեց ավագ աշխատողներին, և ինձ կանչեցին տնօրենի աշխատասենյակ, խիստ հանդիմանեցին (նման մի բան), կշտամբեցին շրջագրեստի փոխարեն միշտ տաբատ կրելու համար և երեսուն փաունդ աննախադեպ նպաստ տվեցին, որպեսզի կարգին արտահագուստ գնեմ: Հագուստ գնելու նպաստը հարուցեց աշխատողների դժգոհությունը: Հին աշխատողները, որոնք շատ էին ծխում, դա համարեցին վիրավորական, թեև առանց այդ էլ անարգանք էին համարում այն, որ հագուստս ճիշտ տեսակի չէ, իսկ ծխի քուլաներում նստած վրդովված նորեկները համարեցին, որ դա անարդար է, և իրենք նույնպես պետք է արտահագուստի նպաստ ստանան:

Այն օրը, որի մասին պատմում եմ, հագիս պատշաճ արտահագուստներից մեկն էր: Երկուսն էլ քոր էին առաջացնում, և ինձ դուր չէր գալիս այն վախեցած, ընկճված ու դանդալոշ կինը, որին վերածվել էի՝ դրանք հագնելով: Բայց ժպտացի ներս մտած տղամարդուն: Նա նման չէր իր հետևում կանգնած տղամարդուն, որի առաջ դարակին դրված էր *Քսաներորդ դարի ժամանակագրություն* գիրքը:

Դարի կեսի էջերին բացված այդ գիրքը մի քանի ամիս միշտ դրված էր գրակալին, որ խանութին տրամադրել էր գրքի հրատարակիչը: Առաջին հարկում աշխատող երեք վաճառողներս որոշել էինք հեռացնել գրակալը, որովհետև այդ մարդը ամեն օր գալիս էր, հանում էր թաց թաշկինակն ու կարդալու ընթացքում կախում էր գրակալի եզրին: Ամեն օր նույն բանն էր անում. ներս էր գալիս, կախում էր թաշկինակը և ժամերով կարդում, հետո շոշափում էր՝ ստուգելով չորությունը, դնում էր վերարկուի գրպանն ու հեռանում խանութից:

Խանութուն միշտ կային տարօրինակ բաներ անող այցելուներ: Հարյուր տարեկան գրախանութը զբաղեցնում էր երեք հարկ հին շենքում, որը լի էր թաքնված անկյուններով, հանկարծակի սանդուղքներով և անսպասելի սենյակներով: Խանութուն մարդիկ էին մահացել: Աշխատողների սենյակում հին վաճառողները ծխից խռպուտ ձայնով միշտ խոսում էին այն օրվա մասին, երբ իրենցից մեկը հայտնաբերեց իր գնման պայուսակների միջև պառկած մեռած տիկնոջը, որի ոտքերը չռված էին, վերարկուն ճմրթված էր, իսկ դեմքին սառել էր զարմանքի արտահայտությունը. կամ այն օրվա մասին, երբ մի ուրիշ աշխատող հայտնաբերել էր մի մեռած տղամարդու, որը չորրորդ հարկի սանդղահարթակի լուսամուտագոգին նստած՝ սևեռուն նայում էր ուղիղ իր առաջ:

Կար մի տղամարդ, որը հաճախ գողանում էր գրքերը, կարդում էր ու վերադարձնում իրենց տեղը գրադարակին, հետո ընտրում էր նորերն ու տանում: Մենք նրան անվանեցինք Գողամուլ: Մի ուրիշ տղամարդ կար, որը քնում էր՝ հենված դարակներին: Նրան անվանեցինք Քնամուլ: Մի կին կար, որը գալիս էր, նոր գրքերի սեղանից վերցնում էր մի գիրք ու արագ թերթում, ասես աչքերով լուսանկարում էր: Նրան անվանեցինք Գրաքննադատ: Երկու տարեց կանանց, որոնք միշտ գալիս էին գիրք ընթերցելու հանդեսներին՝ անվճար գինի խմելու, անվանեցինք Անծրևանոց և տիկին Ձեռնափայտ (այդ տիկինը քայլում էր ձեռնափայտով): Ես գերադասում էի աշխատել առաջին հարկում. սկզբում աշխատում էի երկրորդ հարկի խորքում՝ սանդուղքից հեռու, և մենք ստիպված էինք անընդհատ մաքրել նրանց հետևից, ովքեր միզում էին *Իրական հանցագործություններ* բաժնում. *Մահ իրկնադեմին*, *Յորքշիրի փորոտողը*, *Սպանդ*, *Հանցագործություններ մարդկության դեմ*, *Կատարյալ գոհ*, *Ֆաբերի սպանությունների մատյան* քրեավետերի կոնակներից կաթող մեզը փայլում էր ցերեկային լամպերի լույսից: Միզողներին մենք անվանում էինք Բարբարոսներ:

Թաշկինակ չորացնող տղամարդու մականունը Թույն էր: Գրակալը հեռացնելու օրը մենք երեքով, իրար հրմշտելով ու լռեցնելով, խմբվեցինք վճարասեղանի մոտ՝ տեսնելու, թե ինչ է լինելու: Նա սովորականի պես եկավ: Կանգնեց այնտեղ, որտեղ սովորաբար գրակալն էր: Հետո մոտեցավ մեր սեղանին: Բարբարան իջեցրել էր գլուխը: Ես սևեռվել էի սեղանին դրած ձեռքերիս: Տղամարդը խնդրեց Անդրեային ցույց տալ *Քսաներորդ դարի ժամանակագրություն* գրքի տեղը:

Անդրեան, որ առաջին հարկի փոխկառավարիչն էր, շիկնեց, ձեռքը բարձրացրեց ու մատնանշեց փաստագրական գրականության բաժինը: Հետո ա-

սաց՝ սպասեք: Յույց կտամ: Նրան ուղեկցեց և տվեց գիրքը: Մենք տեսանք, որ տղամարդը դրեց գիրքը գրադարակին՝ կարդալու մակարդակին, ու բաց արեց, հետո թափ տվեց թաց թաշկինակն ու կախեց գրադարակի եզրին՝ քողարկելով ներքևի գրադարակի գրքերը: Երբ թաշկինակը չորացավ, նա փակեց գիրքը, թաշկինակը վերադարձրեց այնտեղ, որտեղից հանել էր, ու հեռացավ:

Այն օրը, որի մասին պատմում էի, նա նորից այնտեղ էր: Միշտ այնտեղ էր: Ես գրեթե տեսնում էի թաշկինակի պարունակությունը, որ ցնդում էր օդ ու տարածվում խանութի հնադարյան աղմկոտ ջեռուցման համակարգում (թեև ենթադրաբար գարուն էր, այդ առավոտյան սպիտակ եղյամը ծածկել էր եկեղեցու բոլոր սրածողերի մակերևութը. աշխատանքի գնալիս տեսա եղյամը անվերջ տների տանիքներից): Երբ դիտում էի նրան, նորից մտածեցի գրավաճառի աշխատանքը թողնելու մասին: Շրջվեցի, որպեսզի չտեսնեմ այդ տղամարդուն, որի վերարկուից կախված էր մոխրագույն գոտին: Դրա փոխարեն լուսամուտից դուրս նայեցի Հին քաղաքի աշխույժ փողոցներից, սևացած եկեղեցուն ու խանութներից, անցնող տաքսիներին ու հետիոտնի անցումի առաջ կանգնած քամահար մարդկանց, թանգարանի փողոցով քամուն ընդդեմ քայլող, եղանակին դիմակայող անցորդներին: Թևերիս տակ արտահագուստը սեղմում էր: Ուսերս շտկեցի՝ վախենալով, որ գործվածքը կպատռվի: Հետաքրքիր էր՝ ինչի մման է աշխատանքը թանգարանում, որտեղ քեզ շրջապատում են ապակե աչքերով կզաքիսները, լցոնած բազեներն ու աղվեսները, որոնք շրջապատված են պարաններով ու *Ձեռք չտալ* նշաններով, վիթխարի ցուցասրահի վերևում դինոզավրերի միացված ոսկորները, նրբազեղ կրունկների կտկտոցը մարմարին և գիտական, ծանրակշիռ, կարգավորված մթնոլորտը: Բայց երևի որոշակի զգեստակարգ կա նաև թանգարանում: Եվ կան այդ տղամարդու պես մարդիկ, որոնք գալիս են այդտեղ բոլոր հետկեսօրերին, կախում են չորանալու թաց թաշկինակները մեռած էակների թաթի ոսկորներին կամ միզում են գիշատիչների կմախքին: Կանգնած մտածում էի՝ արդյոք այս քաղաքում կգտնվի մի աշխատանք, որը կատարելիս չեմ զգա, որ կյանքը՝ իսկական կյանքն ընթանում է մի այլ, ավելի հետաքրքիր, պակաս ճղճիմ տեղում:

Հենց այդ պահին ներս մտավ վայելչագեղ հագուստով տղամարդն ու կանգնեց վճարասեղանի առաջ: Ես ժպտացի նրան:

- Կարո՞ղ եմ Ձեզ օգնել, - ասացի:

Նա դրեց գործապայուսակը սեղանին: Մեծ, կաշվե, մաշված, ուռած պա-

յուսակ էր: Գործարարը նման պայուսակ չէր օգտագործի. գուցե նա գործարար էլ չէր: Միգուցե գիտնական է, մտածեցի, քանի որ գրախանութը շատ մոտ էր քաղաքի միջնադարյան համալսարանին. և այժմ, երբ նրան գիտնական համարեցի, նկատեցի, որ գլխի մազերը խուզելու կարիք ունեն, պաշտոնագրեստը թեթևակի մաշված է, իսկ ինձ ուղղված հայացքը խելացի է. նա անվստահ նայեց ինձ ու բաց արեց գործապայուսակը, որ լի էր փայլուն կոնակով կոշտակազմ նոր գրքերով: Հավանաբար, քրիստոնեության կամ այլ կրոնական գրքերի շրջավաճառ էր: Ես խոժոռվեցի:

- Ես հեղինակ եմ ու պատմաբան, - ասաց նա: - Իմ մասին հավանաբար լսել եք: Գրեթե հաստատ արդեն վաճառել եք այստեղ իմ գրքերը:

Նա ասաց իր անունը, որ ինձ ծանոթ չէր, բայց ես գլխով արեցի և հարգալից ժպիտ պատկերեցի: Այն օրերին հեղինակի այցելությունը գրախանութ առաջացնում էր հետաքրքրություն՝ ի տարբերություն ներկա ժամանակների, երբ հեղինակները հաճախ են այցելում գրախանութները: Այժմ գիրքը միշտ կապակցվում է հեղինակի դեմքին, ձայնին ու արտաքին տեսքին. և այդ ամենը միասին վաճառվում է որպես 9.99 փաունդ արժեցող մեկ հավաքածու. իր ամեն ինչով հեղինակն ասես զետեղված է էջերի մեջ՝ վրիպակների կամ էջանշանների պես:

Տղամարդը հանեց պայուսակից գրքերից մեկը և դրեց վճարասեղանին: Կազմին Հիտլերի լուսանկարն էր: Ես կարդացի շրջված անվանումը: Ինչ-որ բան էր ճշմարիտ պատմության մասին:

- Իմ վերջին գործն է, - ասաց նա:

Բացեցի բերանս, որ ուղարկեն նրան պատմության բաժին: Նա բարձրացրեց մատը, որ լռեմ:

- Սա անգլերեն թարգմանությունն է, - ասաց: - Քանի որ այս գիրքը առկա է միայն այս անգլերեն հրատարակությամբ, ես պետք է սա անձամբ վաճառեմ գրավաճառներին ու ձեր գրախանութի նման հաստատություններին. դա է պատճառը, որ անձամբ եկել եմ այստեղ՝ այս գիրքը վաճառելու: Հետագայում գիրքը լույս կտեսնի ավելի մեծ տպաքանակով, քան այս մեկը, որ հրատարակել է (նա ցույց տվեց գրքի կոնակը, որպեսզի տեսնեմ հրատարակչի պատկերանշանը) *Ամերիկյան փրես* փոքր հրատարակչությունը: Բայց ես ցանկանում եմ, որ այս գիրքը հնարավորինս շուտ մատչելի լինի բոլոր ընթերցողներին, քանի որ այս պահին այն դժվար է գտնել կամ պատվիրել: Հասկանո՞ւմ եք:

Ես գլխով արեցի:

- Գիտեմ, որ ձեզ նման խոշոր գրախանութները սկզբունքորեն կցանկա-

ճան ունենալ բոլոր հրատարակությունները:

Նա ակնկալում էր իմ պատասխանը, ուստի նորից գլխով արեցի:

- Մենք... - ասացի:

- Հասկանո՞ւմ եք: Մեզ հասանելի գիտելիքի մեծ մասը, ընթացիկ կյանքում ստացվող մեր գիտելիքի մեծ մասը՝ ընթացիկ գործերից մինչև պատմության փաստերը, խստորեն գրաքննվում է: - Տղամարդը առաջ թեքվեց: - Այս գիրքը, - ասաց, - ընդվզման մի ձև է այն բանի դեմ, ինչի մասին մենք խոսում էինք:

Նա անաչկոտ, բայց կենսուրախ ու հմայիչ ժպիտ պատկերեց:

- Գրաքննությունը, - ասաց՝ մոտեցնելով ժպտացող դեմքը, - իրական պատմության մահն է: Կարող եք ասել, որ ճշմարտության մահն է: Մեր կյանքի ընթացքում բոլորս ամեն օր ենթարկվում ենք գրաքննության: Հասկանո՞ւմ եք՝ ինչ են ասում:

- Այո, - ասացի:

- Մենք պետք է կռիվ տանք մեր անձի ստոր գրաքննության դեմ: Օրինակ, իմ դեմ բազում տեսակի դավեր են հյուսել, - ասաց: - Իմ դեմ հենց այս պահին փաստորեն դավադրություն կա: Անկախ այն բանից, թե ինչ են անում, ստիպված են գործել նրանց դեմ, ովքեր իմ դեմ են գործում:

Նա գլխով արեց՝ ինձ հրավիրելով հաստատելու իր ասածը, և ես նույնպես գլխով արեցի, թեև պատկերացում չունեի, թե նա ինչից է խոսում:

- Եվ դա նշանակում է, - ասաց՝ դիմացս կանգնեցնելով գիրքը, - որ իմ աշխատանքը հաճախ գրաքննվում է, որովհետև ես գրում եմ իրական պատմություն, որը ոչ ոք չի ցանկանում լսել: Գրում եմ ճշմարտությունը, որ վարձու հրեա հրատարակիչները չեն հրատարակում, որովհետև բավարար խիզախ կամ ազնիվ չեն, քանի որ նրանց վճարում է հրեաների մեծամասնությունը, որ շահագրգռված է, որպեսզի ճշմարտությունը ամեն օր հերքվի:

Տղամարդը շունչ առավ: Դեմքը թեթևակի շառագունել էր: Ես դեռ շարունակում էի գլխով անել, թեև այժմ ընկրկել էի ու մտածում, թե ինչ անեն: Հետաքրքիր էր, թե որտեղ էին առաջին հարկի մյուս աշխատողները: Խանութում կարծես ուրիշ ոչ ոք չկար. միայն ես էի, պաշտոնագգեստով տղամարդը և տղամարդը, որի թաշկինակը չորանում էր գրադարակին, մինչդեռ նա շարժվում էր ժամանակի միջով *Քսաներորդ դարի ժամանակագրություն* գրքի էջերին:

- Տեսնում եք, չէ՞, ինչ է կատարվում, - ասաց պաշտոնագգեստով տղամարդը: Եվ ժպտաց ինձ հմայիչ ժպիտով:

Ես ձեռքս սահեցրի վճարասեղանի տակ և մատս դրեցի կոճակին, որն

անվանումն էինք տագնապի կոճակ. այդ կոճակը նախատեսված էր կողոպուտի և այլ դեպքերի համար, երբ աշխատողն զգում էր, որ իրեն վտանգ է սպառնում: Բայց եթե սեղմեի, ի՞նչ էի ասելու անվտանգության աշխատողին, երբ նա գար: *Այս մարդը մոլեռանդ է: Խնդրում եմ դուրս տանել նրան: Կամ ինձ դուր չի գալիս այն, ինչ նա ասում է: Նա վտանգավոր սուտասան է: Խնդրում եմ նրան վտարել խանութից:*

Ես շոյեցի կոճակը:

- Զըմ, - ասացի:

Նա հանում էր գրքերը պայուսակից. արդեն տասը կամ ավելի գիրք կար վճարասեղանին:

- Ոչ, - ասացի:

Նա կանգ առավ: Գիրքը ձեռքին պահած սևեռվեց ինձ:

- Դուք հրեա՞ եք, - հարցրեց:

- Ոչ, - ասացի: Բանն այն է... Բանն այն է, որ ես չեմ գիրք գնողը: Գրքերը գնում է կառավարիչը: Ես չեմ կարող: Ես ընդամենը...

Տղամարդը կարծես զայրացավ: Մի պահ սպառնալի տեսք ուներ: Զետո դեմքը հանդարտվեց:

- Կարո՞ղ եք կանչել կառավարիչին, - ասաց:

- Կարող եմ կանչել փոխկառավարիչին, - ասացի:

- Իսկ նա կարո՞ղ է գիրք գնել, - հարցրեց տղամարդը:

Ես գլխով արեցի ու հավաքեցի հեռախոսի համարը: Լուռ կանգնած՝ մենք սպասում էինք, որ Անդրեան ցած իջնի: Տղամարդը նայեց ձեռքի եղունգին և անհամբեր շփեց բթամատով: Դրամարկղի սարքի մոտ կանգնած՝ սևեռվել էի դրա կողքին տունձված մաշված ուղեցույցին, որը բուրդին սվորեցնում էր գծանիշ ծածկագիր կարդալու եղանակը: Անդրեան իջավ վերևից: Անցավ բաժանիչի տակով և կանգնեց կողքիս վճարասեղանի հետևում:

- Ցավում եմ, - ասաց, - բայց նման հրատարակումներ մեր խանութը չի վաճառում:

Տղամարդը գրեթե գոհ տեսք ուներ: Անորոշաբար ժպտալով՝ նա գրքերը վերադարձրեց իր պայուսակը, կողպեց ճարմանդը և դուրս եկավ խանութից:

Դուռը փակվեց:

- Աստված իմ, - ասացի:

- Մեկ ռոպեից հետ կգա, - ասաց Անդրեան: - Նա միշտ վերադառնում է: Կմտնի կողքի դռնից, կբարձրանա երկրորդ հարկ և կառաջարկի պատմության բաժնում: Գրագ կգամ: Նրան ի՞նչ ասացիր:

- Ոչինչ, - պատասխանեցի: - Բան չասացի:

Եվ հետո ահա թե ինչ պատահեց: Տղամարդը, որին անվանում էինք Թույն, ծալեց թաշկինակը և փակեց *ժամանակագրությունը*: Բայց սովորականի պես խանութից դուրս գալու փոխարեն մոտեցավ վճարասեղանին: Կանգնեց դրա առաջ և ուղիղ նայեց ինձ: Ճոճեց գլուխը: Հետո նայեց Անդրեային և մատը պտտեց քունքին:

- Այս կինը խելառ է, - ասաց: - Լրիվ խելառ:

Երբ դուռը փակվեց նրա հետևից, Անդրեան ասաց ինձ.

- Գիտե՞ս, ամեն անգամ այդ մարդուն տեսնելով ամոթ եմ զգում մեր արածի համար: Դրա պատճառով երբեմն գիշերը չեմ կարողանում քնել: - Հետո ավելացրեց, - Լավ, հիմա կարող ես գնալ ընդմիջման:

Ընդմիջման ընթացքում տրամադրությունս սուսկալի էր: Հանգստյան սենյակը հագեցած էր ծխախոտի ծխի խեղդուկ օդով: Շփվելու համար պիտանի չէր: Այդ օրը որոշեցի *Չծխել* ցուցանակներ պատրաստել և փակցնել դեղին պատերով մեկ: Ինչի պատճառով համատարած պատերազմ սկսվեց:

Բայց աշխատողների սենյակում ծխելու իրավունքի մասին բուռն վեճերից հետո ինձ շուտով տեղափոխեցին Նոր քաղաքի նոր ցանցախանութ: Նախ՝ օգնեցի տեղադրել նոր համակարգիչներ, որոնք ինքնուրույն վերապատվիրում էին այն գրքերը, որոնք վաճառվում էին ավելի քան երեք օրինակով: Հետո ինձ նշանակեցին առաջին հարկի կառավարիչ: Այժմ կարող եմ կրել ինչ ուզեմ (թեև հագուստս միշտ նրբագեղ է) և աշխատողներին նույնպես թույլատրում եմ հագնել ինչ ուզեն՝ խելամտության սահմաններում:

Տեղափոխվելուց հետո աչալուրջ սպասում էի Թույնի այցելությանը: Բայց նրան նորից չտեսա: Նման անձնավորություններ այս խանութում չեն լինում: Չգիտեմ՝ ինչու, գուցե այն պատճառով, որ մաքուր գրախանութ է. փայտե հատակով լայն տարածք է՝ գրքերի ու դարակների հստակ դասավորությամբ, բացի այդ, այստեղ ոչ ոք չի միզում. հեշտ չի լինի աննկատ անել: Հաճախորդները նույնիսկ հազվադեպ են նստում բազկաթոռներին, որովհետև ընկերության կանոնակարգը պահանջում է դրանք տեղադրել բաց տարածքում, որպեսզի անհարմար լինի երկար մնալ բազկաթոռին: Բայց այստեղ մարմնավաճառների կան. չեմ հիշում, թե նրանք եղել են իմ նախորդ խանութում: Գուցե այնտեղ դժվար էր պայմանավորվել, պետք էր թաքնվել անկյուններում ու խորշերում. տարածքը փոքր էր, և գրեթե անհնար էր աննպատակ ճեմել՝ անմեղ տեսք ընդունելով: Կամ էլ այն պատճառով, որ այնտեղ սրճարան չկար:

Բայց իմացեք: Ես զգոն եմ: Կանգնած եմ վճարասեղանին դրված համակարգիչների հետևում: Եթե այստեղ գա այն տղամարդը, եթե այդ մարդը
Copyrighted Material

Երբևիցե խիզախի գալ այստեղ, ես նրան դուրս կանեմ: Հավատացեք: Այժմ դա անելու իրավասությունն ունեմ և չեմ վարանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	3
ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐ	11
ԱՃԱՊԱՐԱՆՔ	18
ՄԱՅԻՍ	34
ԴՐԱԽՏԱԿԱՅՐ	44
ՀՈԳԵՄԱՇ	70
ԳՐՔԻ ԱԿՈՒՄԲԸ	75
ՀԱՎԱՏԱ ԻՆՁ	84
ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ	90
ՎԵՐՋՆԱՑԱՆԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ	101
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲՈՑԸ	108
ԲԱՆԵՐԻ ՍԿԻՉԲԸ	116